

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
17	Նոյեմբեր	2021 թ.		Բ	5879069975
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
17	Նոյեմբեր	2021 թ.		Մերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀՂՄ կտրոսի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	0	6	3	3	7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ԿՐԹԱՐԱՆ ՍՈՆԱ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	ԱյՂի Բանկ ՓԲԸ		N 11813000406200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 71 16							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ Ֆին. Նախ. աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (ընկերության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱՋԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		Համար			Ամսաթիվ		
	Լիազորագիր							

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
NN Շ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորներ	Շահմանուր ծավալը կամ ծառայության քանակը	Միավորի գինը	Ձեռք(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թարգմանչական ծառայություն՝ իսպաներենից հայերեն գրավոր	էջ	3	2400		7200
2	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից թուրքերեն գրավոր	էջ	8	2700		21600
3	Թարգմանչական ծառայություն՝ չինարենից հայերեն գրավոր	էջ	1	11000		11000
4	Թարգմանչական ծառայություն՝ պարսկերենից հայերեն բանավոր	ժամ	5	5900		29500
Ընդամենը						69300

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ **HOVHANNISYAN SONA 5808870623**
(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրություն, անուն, ազգանուն)

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

07.10.2021թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության դատախազ Գ. Մելիքյանս, ուսումնասիրելով թիվ 84100219 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության վերաբերյալ ՀՀ ԱԳՆ-ից ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

02.07.2020թ. Իսպանիայի Թագավորության իրավասու մարմիններին է ուղարկվել թիվ 84100219 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություն:

07.10.2021թ. ՀՀ ԱԳՆ-ից ստացվել է հիշյալ միջնորդության վերաբերյալ ԻԹ իրավասու մարմնի գրությունը՝ իսպաներեն լեզվով:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, ինչպես նաև այն, որ պարսկերեն փաստաթուղթն անհրաժեշտ է թարգմանել հայերեն իսկ ԽԱԶԱՏՐՅԱՆ ԱՆԺԵԼԱՆ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 84100219 քրեական գործով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդության վերաբերյալ ՀՀ ԱԳՆ-ից ստացված փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ԽԱԶԱՏՐՅԱՆ ԱՆԺԵԼԱՑԻՆ (անձնագր՝ AN0273712, դիպլոմ թիվ 047034,) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության դատախազ

Գ. Մելիքյան

Սրանցա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանալիության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
Անժելա Խաչատրյան

07.10.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

11-ը հոկտեմբերի 2021թ.

ք.Երևան

«Վ» գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական Մ.Հակոբյանս, ուսումնասիրելով Մեհմեթ Թայյիփ Ալտաշի վերաբերյալ «Վ» պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունից մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104021 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2021 թվականի հոկտեմբերի 8-ին «Վ» գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում մեղադրական եզրակացությամբ ստացվել է «Վ» պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված թիվ 84104021 քրեական գործն ըստ մեղադրանքի Մեհմեթ Թայյիփ Ալտաշի՝ «Վ» քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 267.1-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով:

2021 թվականի հոկտեմբերի 11-ին որոշում է կայացվել թիվ 84104021 քրեական գործով մեղադրական եզրակացությունը հաստատելու մասին:

«Վ» քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Վ» քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրյալ Մեհմեթ Թայյիփ Ալտաշը հայերենին չի տիրապետում, այլ տիրապետում է թուրքերենին և իր հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չի հայտնել, ուստի քրեական գործով կազմված մեղադրական եզրակացությունը՝ կից հավելվածներով, և այն հաստատելու մասին որոշումը հայերենից թուրքերեն թարգմանելու ու մեղադրյալին հասկանալի լեզվով նրան հանձնելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Նարինե Դավիթի Թադևոսյանին (անձնագիր՝ AP 0536210, տրված՝ 12.08.2016թ., 027-ի կողմից, դիպլոմ AM No 025713՝ տրված ԵՊՎ-ի պետական քննական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 25-ի որոշմամբ):

Նարինե Թադևոսյանն ունի համապատասխան մասնագիտական կրթություն, այն է՝ արևելագիտություն (թուրքագիտություն), ազատորեն տիրապետում է հայերեն և

Վերոգրյալի հիման վրա, և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով և 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Մեհմեթ Թայյիփ Ալտաշի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչության 3-րդ բաժնում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 84104021 քրեական գործով թարգմանություն իրականացնելու համար հրավիրել «Իրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Նարինե Դավիթի Թադևոսյանին (անձնագիր՝ AP 0536210, տրված՝ 12.08.2016թ., 027-ի կողմից, դիպլոմ AM No 025713՝ տրված ԵՊՀ-ի պետական քննական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 25-ի որոշմամբ):

2. Նարինե Թադևոսյանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններին և իրավունքներին:

3. Նարինե Թադևոսյանին նախազգուշացնել քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ, արդարադատության առաջին դասի խորհրդական՝

 Մ. Հակոբյան

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Նարինե Թադևոսյան

« 11 » 10 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

29.09.2021թ.

ք.Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-հրավական համագործակցության վարչության դատախազ Գ. Մելիքյանս, ուսումնասիրելով թիվ 58157920 քրեական գործով ՀՀ գլխավոր դատախազությունում ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

02.04.2021թ. ՀՀ գլխավոր դատախազությունից Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության իրավասու մարմիններին թիվ 58157920 քրեական գործով ուղարկվել է քննչական պահանջ:

25.09.2021թ. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության իրավասու մարմիններից թիվ 58157920 քրեական գործով ստացվել է գրություն չինարեն լեզվով:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի՝ թարգմանիչը պարտավոր է՝ [...] ստորագրությամբ հաստատել [...] քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, անհրաժեշտություն է առաջացել այն թարգմանել չինարեն, իսկ ԳԱՅԱՆԵ ՄԱԼԻՇԵՆԿՈՒՆ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 58157920 քրեական գործով քննչական պահանջի վերաբերյալ ՉԺՀ-ից ստացված փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել ԳԱՅԱՆԵ ՄԱԼԻՇԵՆԿՈՒՆ (ID 010978179, դիպլոմ AB 100878) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության վարչության դափախագ



Գ. Մելիքյան

Սրացա սույն որոշման օրհնակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
Գայանե Մաիշենկո



«Ճ» 09. 2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

05 նոյեմբերի 2021թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանոյանս, ուսումնասիրելով Կիպրոսի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող **ԱԿԲԱՐ ԱԲԴՈԼԱՀՈՍՍԵԻՆ ՔԱՐԻՄԻՆ (AKBAR ABDWLHOSSEIN KARIMI)** հանձնելու նպատակով կալանավորելու վերաբերյալ միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցների կողմից 2021 թվականի հոկտեմբերի 8-ին՝ ժամը 15³⁰-ին, հայտնաբերվել, այնուհետև ժամը 17³⁰-ին ձերբակալվել է Կիպրոսի Հանրապետության 371-154, 282-րդ և 283-154 հոդվածների (մի խումբ անձանց կողմից նախանական համաձայնությամբ ծանր կողոպուտ) մեղադրանքով, միջազգային մակարդակով՝ Ինտերպոլի «Կարմիր անկյունով» քարտի տեսքով հետախուզվող **ԱԿԲԱՐ ԱԲԴՈԼԱՀՈՍՍԵԻՆ ՔԱՐԻՄԸ (AKBAR ABDOLHOSSEIN KARIMI)**:

ԱԿԲԱՐ ՔԱՐԻՄԻՆ (AKBAR KARIMI) վերաբերյալ նախապատրաստված փաստաթղթերը 2021 թվականի հոկտեմբերի 8-ին փոխանցվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ստացվել է **ԱԿԲԱՐ ՔԱՐԻՄԻ (AKBAR KARIMI)** հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է ծավալնակ, **ԱԿԲԱՐ ՔԱՐԻՄԻ (AKBAR KARIMI)**՝ հանձնման մասին միջնորդությունը քննարկելու, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ հարցումներ կատարելու, ստացված պատասխանների հիման վրա համապատասխան որոշում կայացնելու համար, 2021 թվականի նոյեմբերի 2-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ **ԱԿԲԱՐ ՔԱՐԻՄԻՆ (AKBAR KARIMI)** հանձնման նպատակով կալանավորելու մասին, որի վերաբերյալ դատական նիստը նշանակվել է **2021 թվականի նոյեմբերի 5-ին՝ ժամը 15³⁰-ին**:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ ԱԿԲԱՐ ՔԱՐԻՄԻՆ (AKBAR KARIMI) չի տիրապետում ան դատավարության լեզվին, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան չյուն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության քում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ստությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում վճարել դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ հայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական վարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

ԱԿԲԱՐ ԱԲԴՈՒԼԱՀՈՍԵԻՆ ՔԱՐԻՄԻՆ (AKBAR ABDWLHOSSEIN KARIMI) անձնելու նպատակով կալանավորելու վերաբերյալ 2021 թվականի նոյեմբերի 5-ին՝ ժամը 15³⁰-ին, նշանակված դատական նիստին պարսկերեն թանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ իրավիբել Հրանուշ Մկրտիչի Թախմասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0780981, տրված 22.12.2013թ., 029-ի կողմից, նույնականացման քարտ՝ № 000407163, տրված 27.12.2013թ., 029-ի կողմից, դիպլոմ՝ PB սերիայի թիվ 013781, տրված 05.07.1990թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր արավունքների և պարտականությունների հետ:


Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն սշխատավարձի հարյուրապատիկից նրեքհարյուրապատիկի չափով, կամ լալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

արչական շրջանի դատախազի
եղակալ, արդարադատության
աջին դասի խորհրդական



Ա. Կոստանդյան

ուսցա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ նքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական րքի 338-րդ հոդվածով նախապեսված պարտասխանարվության մասին գուշացված եմ:

մանիչ՝ 

«05».....71..... 2021թ.